Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք.Երևան 15.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 8-ի նյութական իրավունքի բաժնի 7"9-րդ, 14"10-րդ, 24.13-րդ, 9"35-րդ, 4"45-րդ, 45"46-րդ, 31"52-րդ, 25"55-րդ, 2"61-րդ, 35.64-րդ հարցերը:

9-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, խիստ թերի են ինչը հնարավորություն թույլ չի տալիս ուղեցույցում նշված ճիշտ տարբերակից շեղվող տարբերակը ճիշտ համարելու համար: Հավակնորդի կողմից ներկայացված հիմնավորումներից հասկանալի չէ, թե ինչու է ընտրվել դ/ տարբերակը՝ յուրացում և յուրացման օժանդակություն: Հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

10-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները կրկնում են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտած դիրքորոշումները, մյուս կողմից խնդրի պայմանների ոչ հստակությունը թույլ չի տալիս գալ միանշանակ եզրահանգման, ուստի նշվածը մեկնաբանելով հօգուտ հավակնորդի , տրվում է 1 միավոր:*

13-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի փաստարկումը չի բխում խնդրում ներկայացված փաստերի իրավական վերլուծությունից, ներկայացված տարբերակում առկա է հանցագործությունների համակցություն, քանի որ խնդրի պայմաններից երևում է,*

որ Թ-ի կողմից առկա է նաև հրազենը պահելու դիտավորություն, ուստի գնահատականը չի բարձրացվում:

35-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի կողմից ներկայացված հիմնավորումները խնդրում առկա պայմանների անբավարարության պարագայում ողջամիտ են և ընդունելի հանձնաժողովի համար, հետևաբար տրվում է 1 մավոր:*

45-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի տրվում է 1 միավոր:*

46-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները բխում է քրեական իրավունքի տեսության փաստական սխալի պարագայում արարքի որակման կանոններից, ուստի տրվում է 1 միավոր:*

52-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները չի բխում քրեական օրենքի նորմի մեկնաբանությունից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

55-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումներն առ այն, որ առկա է չհաջողված հանցակցության երկու տեսակ, ընդունելի է: Հետևաբար, հաշվի առնելով, որ մեջբերված իրավադրությունների և եզրահանգումների համատեքստում ընտրված տարբերակը ճիշտ է, ուստի տրվում է 1 միավոր:*

61-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները շեղվել են խնդրի փաստական հանգամանքներից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

64-րդ հարցի *վերաբերյալ հանձնաժողովն արձանագրում է, որ թեև շարունակվող հանցագործությունը ենթադրում է նույնական արարքների կատարում, ինչը հավաստվել է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ, սակայն հաշվի առնելով այն, որ հափշտակության պարագայում դրանց եղանակների՝ մեկը մյուսին վերաճման հանգամանքը քննարկման առարկա չի դարձվել ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ, հիմք է տալիս ընդունելի համարել հավակնորդի կողմից դոկտրինալ աղբյուրներով հիմնավորված դիրքորոշումը, ուստի տրվում է 1 միավոր:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Տ

Թիվ ***1987*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն, նյութական իրավունքից ստացված 22 միավորը բարձրացնել 6 միավորով՝ արդյունքում արձանագրել 28 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ